

**14-16-րդ դդ. հայկական վիմական
արձանագրությունների անձնանունները
(ներկայիս Ուկրաինայի տարածաշրջան)**

Գայանե Չոփուրյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.1-52>

***Հանգուցային բառեր.** անձնանվանագիտություն, արական անձնանուններ, իգական անձնանուններ, տիտղոսանուններ, համադրություն, հակադրություն*

Նախաբան

Անձնանվանագիտական համակարգի քննությունը լեզվաբանության առանցքային հարցերից է, որի ուսումնասիրության լուրջ հաջողությունները պայմանավորված են բառարանագրության ոլորտում կատարված հսկայական աշխատանքով: Հայ անձնանվանագիտության ոլորտում առանձնանում է Հ. Աճառյանի հինգհատորյա բառարանը¹, որը հայ անձնանվանական համակարգի գլխավոր տեղեկատու է: Ինչպես Վ. Նիկիտովն է նշում՝ Հ. Աճառյանի բառարանը «Կովկասի անձնանվանագիտության կարևոր իրադարձությունն է, որը ներառում է 5285 անուններ՝ յուրաքանչյուրի մանրամասն փաստարկմամբ» [9, 111]: Բառարանագրության ոլորտում առանձնանում է նաև Փ. Մեյթիխանյանի «Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարանը»: Հանդիպում են նաև նեղ բնույթի փոքրածավալ ուսումնասիրություններ, որոնց համար սկզբնաղբյուր են դարձել հայերեն ձեռագիր և վիմագիր հիշատակարանները. նրանցում նկատվում է, որ անունն ամրագրելը հավատացյալ քրիստոնյայի համար *կենսաց գրում* բարի գործերով հիշվելու գրավական էր, քանի որ քրիստոնեական ընկալմամբ՝ դատաստանի օրը մարդկանց գործերն են միայն վկայելու նրանց մասին [7]: Այդ է պատճառը, որ արձանագրություններ են հիշատակվում ճարտարապետական կառույցների վրա (քաղաքացիական շենքեր, շինություններ, կամուրջներ և այլն), որոնցից առանձնանում են կրոնիկն առնչվող առարկաները (խաչքարեր, եկեղեցիներ, եկեղեցական արարողությունների պարագաներ, տապանաքարեր):

Սույն աշխատանքում լեզվաբանական քննության ենթարկել «Դիվան հայ վիմագրության» 7-րդ հատորում² հիշատակված անձնանունները՝ դրանք համեմատելով Հ. Աճառյանի հիշյալ բառարանի տվյալների հետ: Միաժամանակ փորձել ենք անձնանունները դասակարգման ենթարկել՝ ըստ կիրառության, ավելի վաղ հիշատակության, հնչյունական տարբերակի առկայության և կազմության՝ նպատակ հետապնդելով ուսումնասիրելու ներկայիս Ուկրաինայի 14-16-րդ դդ. հայկական գաղթավայրերում անձնանվանագիտական համակարգի դրսևորումները:

Նշված գաղթավայրերի վիմական արձանագրություններում անձնանունները կա՛մ ամբողջությամբ, կա՛մ հնչյունական որոշ կազմով վկայված չեն Հ. Աճառյանի վերոհիշյալ բառարանում՝ արձանագրությունների նշված հատորի ավելի ուշ հրատարակվելու պատճառով: Դրանցում տեղ գտած որոշ արձանագրություններ ավելի վաղ ուսումնասիրել և վերծանել են Քուչուկ Հովհաննիսյանը և Մինաս Բժշկյանը: Այդ է պատճառը, որ

¹ Այսուհետև՝ ՀԱԲ:

² Սույն հատորն ընդգրկում է ներկայիս Ուկրաինայի և Մոլդովայի տարածաշրջանների արձանագրությունները: Մեր քննությունից դուրս ենթ թողել Մոլդովայի տարածաշրջանի արձանագրությունները ուշ շրջանում վիմագրված լինելու պատճառով:

Հ. Աճառյանը բազմաթիվ վկայություններ ունի նրանց վերծանած արձանագրություններից: Այդ արձանագրությունները որոշ դեպքերում բառարանում հիշատակած անձանունների համար ավելի վաղ վկայություններ են, քան իր նշածները, չնայած այն հանգամանքին, որ այդ արձանագրությունների մի մասի հեղինակները Ք. Հովհաննիսյանն ու Մ. Բժշկյանն են:

Խնդրո առարկա թեման համակողմանի քննության ենթարկելու համար կարևորել ենք այն հանգամանքը, որ ներկայիս Ուկրաինայի տարածաշրջանի հայերը գաղթել են հիմնականում Անիից՝ ժառանգորդական կարգով պահպանելով իրենց անձանվանական համակարգը, որոնք 14-16-րդ դարերում համալրվել են նոր անձանուններով:

Ուկրաինայի 14-16-րդ դդ. վիմական արձանագրություններում հիշատակվում են և՛ արական, և՛ իգական անուններ, որտեղ վերջիններիս հիշատակությունը խոսում է գաղթավայրերի հասարակական և տնտեսական կյանքում հայ կնոջ ներգրավվածության և դերի մասին:

Վիմական արձանագրություններում առկա լեզվական նյութը հնարավորություն է ընձեռում քննելու ոչ միայն վերոնշյալ տարածաշրջանի ու ժամանակահատվածի վիմական արձանագրություններում կիրառված անձանունները, այլև հարստացնելու հայոց անձանվանագիտական համակարգը նոր անուններով, վերջիններիս հնչյունական տարբերակներով և նոր վկայություններով, որոնց ուսումնասիրությամբ էլ պայմանավորված է մեր աշխատանքի արդիականությունը:

14-16-րդ րդ դդ. հայկական վիմական արձանագրությունների անձանունները (ներկայիս Ուկրաինայի տարածաշրջան):

Վիմական արձանագրություններում ՀԱԲ-ի համեմատությամբ առանձնանում են՝

1. Անձանուններ, որոնց համար արձանագրություններում առկա են ավելի վաղ շրջանի հիշատակություններ: Այսպես՝ *Մայիսս* անձանվան ամենաինչ հիշատակությունը 1371 թվականն է, մինչդեռ ՀԱԲ-ում՝ 1656 թ.: Մյուս անձանունները ներկայացված են աղյուսակում.

Անձանուններ	Արձանագրություններում վկայված տարեթիվեր	ՀԱԲ-ում վկայված տարեթիվեր
<i>Արական</i>		
Աայի ³	1453 թ.	1650 թ.
Եմին	1372 թ.	1476 թ.
Խաչում	1489 թ.	1506 թ.
Խրտրշայ ⁴	1356 թ.	1425 թ.
Մայիսս	1371 թ.	1656 թ.
Նոր Պարոն ⁵	1425 թ.	1470 թ.
Սատայթ ⁶	1408 թ.	1749 թ.
Սարուպե ⁷	1451 թ.	1602 թ.

³ *Մայի*-ն իգական անուն է (ՀԱԲ, հ. 1, 226), սակայն արձանագրության մեջ *պարոն* բառի հետ է գործածված, ինչից էլ հասկանում ենք, որ տվյալ պարագայում այն արական է:

⁴ ՀԱԲ-ում՝ *Խորշահ* բառահոդվածի տակ (ՀԱԲ, հ. 2, 505):

⁵ ՀԱԲ-ում կից գրությամբ է հանդես գալիս:

⁶ ՀԱԲ-ում *Սաղաթ* անձանունը հիշատակված է 1458 թ.-ից, իսկ *Սատայթ* տարբերակը՝ 1749 թ.-ից, որը կիրառվել է 1408 թվագրության արձանագրության մեջ (ՀԱԲ, հ. 4, 336):

⁷ ՀԱԲ-ում նշվում է որպես *Մարիբեդ* անձանվան տարբերակ (1602թ.) (ՀԱԲ, հ. 2, 461):

Անձնանուններ	Արձանագրություններում վկայված տարեթվեր	ՀԱԲ-ում վկայված տարեթվեր
<i>Իզական</i>		
Ազիզ Խաթուն	1446 թ.	1506 թ.
Ճիհան ⁸	1496 թ.	1620 թ.
Պէլ Մելիք ⁹	1446 թ.	1654 թ.
Սիրախաթուն	1427 թ.	1602 թ.
Տիշատ ¹⁰	1427 թ.	1437 թ.

2. Անձնանունների հնչյունական տարբերակներ, որոնք ՀԱԲ-ում բացակայում են, ինչպես՝ *Ռաբել* (1571 թ.) <*Ռաբել, Ուլպէկ* (1487 թ.) < *Ուլուբեգ, Սարուպէ* (1451 թ.) < *Սարիբեգ, Սատատ Խաթուն* (1460թ.) < *Սադաթ, Թագորշա* (1403 թ.) < *Թագորշահ և այլն*:

3. Անձնանուններ, որոնք, ըստ մեր դիտարկումների, հիշյալ բառարանում բացակայում են: Դրանցից են՝ *արական Սթաբա* (1528 թ.), *Ստիր* (1528 թ.), *Արևուշքա* (1451 թ.), *Աւրտապէկ Նահատակ* (1456 թ.), *Բադիար* (1509 թ.), *Եալիկ* (1540 թ.), *Թուլադ* (1444 թ.), *Խաչկարապետ* (1559 թ.), *Հունդիշ* (1406 թ.), *Մերհիդեր* (1425 թ.), *Միխն* (1581 թ.), *Մուսախ* (1545 թ.), *Սասիր* (1527 թ.)¹¹, *Տեմուրչի* (1401 թ.): Վերջինս կազմված է «*Թամուր* (թուրք. «երկաթ») + *ճի/չի* ածանց» [3, 33] կաղապարով, որի միայն պարզ կազմությունն է վկայված բառարանում, չնայած որ այս անձնանվան ածանցավոր տարբերակից առաջացած ազգանունները (*Դեմիյան, Դեմուրճյան, Դեմուրչյան, Դամուրջյան*) [4, 96] հաստատում են անձնանվան գոյության փաստը: Այլ տեսանկյունից այն կարող է տեղանվանական հիմքով անձնանուն լինել, քանի որ և՛ Արևելյան, և՛ Արևմտյան Հայաստաններում կան այնպիսի տեղանուններ, որոնք նույն հիմքն են ենթադրում, ինչպես *Դեմուր/Երկաթասար* (Սյունիք), *Դերմուրչի /Դեմուչի /Դիմուրջի / Դերմուրչի /Շողու Դեմուրչի* (Ավերակ գյուղ Կարսի մարզում), *Դեմուրչա-Ալի* [5, 79] և այլն: Սակայն հայոց մեջ այդքան էլ տարածված չէ անուն-տեղանուն անցումը, ուստի կարծում ենք՝ այս անձնանունը «*Թամուր* անձնանուն + *ճի/չի*» կաղապարից առաջացած կազմություն է:

Ինչպես նշեցինք՝ արական անձնանունների համեմատությամբ՝ իգականները սակավաթիվ են: Դրանք են՝ *Արևուշ Խաթուն, Գոհար Պիքա, Եսիլ Մելիք* (1547 թ.), *Ետիկար* (1446 թ.), *Մարի Մելիք* (1408 թ.), *Շիրին Մելիք* (1427 թ.)¹², *Ուլուպիքա* (1588 թ.), *Պիքաչա* (1588 թ.):

⁸*Ջիհան* անձնանունը ավելի վաղ կիրառություն ունի, սակայն *Ճիհան* տարբերակը ՀԱԲ-ում հիշատակված է 1620 թ.-ից (ՀԱԲ, հ. 4, 298):

⁹ՀԱԲ-ում *Բեզսելեք* և *Պէսելիք* իգական նույն ծագման անձնանունների առանձին բառահոդվածներ կան, որոնցից երկրորդի իգականի գոյությանը Հ. Աճառյանը կասկածում է: Սակայն մեր ուսումնասիրած արձանագրություններում «արական անձնանուն կամ տիրոջանուն + մեիք (արաբերեն melek՝ հրեշտակ)» կաղապարով բոլոր բարդությունները իգական են: Ընդ որում՝ *Պէսելիք* թեական իգականի համար որպես հիշատակություն Հ. Աճառյանը նշում է Թեոդոսիայի տարածաշրջանի արձանագրություններից մեկը:

¹⁰ՀԱԲ-ում գտնում ենք *Դիշատ* բառահոդվածի տակ, որի հնչյունական այլ տարբերակներ ավելի վաղ են կիրառվել, քան *Տիշատ* ձևը (ՀԱԲ, հ. 2, 69):

¹¹ ՀԱԲ-ում վկայված չէ, սակայն ազգանունների բառարանում գտնում ենք *Սասիրջանյան, Սադերջանյան* կազմությունները (ՀԱԶԲ, հ. 1, 311):

¹² ՀԱԲ-ում վկայված չէ, սակայն *Շիրին* բաղադրիչի այլ բարդություններ առկա են (ՀԱԲ, հ. 4, 165):

Վիմական արձանագրություններում առանձնանում է *Եմանատ* (1454 թ.) անձնանունը, որը տվյալ արձանագրության բովանդակությունից հասկանալի չէ՝ արական է, թե՞ իգական:

ՄԱ ՆՇԱՆՔՍ ԲԱՐԷԽԱԻՍ ԵՆ/ ՅՈՎԱՆԷ-
ՍԻՆ, ԵՄԱՆԱՏԻՆ/ ՆՈՒԲԱՐԻՆ, ԽԵ-
ԼՕՐԻՆ, ՎԱՌՎԱՌԻՆ. ԹՎ. ԶԳ (1454):

Մանթ. Խաչքարի աջ կողմը ծածկված էր
յուզաներկի թանձր շերտով:

Ուկրաինայի հայկական վիմագիր արձանագրություններում կան այնպիսի անձնանուններ, որոնք՝

1. դեռևս գրական հայերենի զարգացման հին շրջանից են ավանդվել և կիրառվում են նաև մեր օրերում: Դրանցից են՝ արական *Սարգիս, Մելիք, Պետրոս, Ղազար, Գրիգոր, Յակոբ, Շահապ* և այլն, և իգական՝ *Վարդ* (զնդ.) անձնանունները: Բերված պարզ կազմություններից զատ հանդիպել են նաև *-իկ* նվագափաղաքական ածանցով *Հարիկ* և *Վարդիկ* արական անձնանունները: Վերջինս, ըստ կիրառության, հետաքրքիր պատմական զարգացում ունի. հայերենի հին և միջին շրջաններում դիտվել է արական, իսկ այժմ այն իգական անուն է,

2. գրական հայերենի զարգացման միջին շրջանում են սկսել կիրառվել՝ պայմանավորված օտար միջավայրի ազդեցությամբ: Դրանք կազմությամբ լինում են.

ա) պարզ, ինչպես *արական* – *Աւետ, Սայի, Բարս, Բաղիար, Գորգ, Մուտայի, Միրան, Նահատակ, Պալա, Պապա, Պիաթա, Ջիհան/Ճիհան, Սալյուկ, Սատիր, Սուլթան* և *իգական* – *Ջուրուք, Գատարինէ, Մելիք*, և այլն: Վերջինս արձանագրության բովանդակությունից ենթահասկանում, որ իգական անուն է, որտեղ նշվում է, որ նա *Սարգիս* քահանայի քույրն է՝

ՄԵՐԶԻԳԵՐԻՆ, ՌԻՆՈՒԽԱՄԹԻ ՈՒՆԼԻՆ, ԱՎԱՐ
ՏԻԿՆԱՅ/ ՅԱԿՈՐԻՆ, ԹՈՒՄԱՆԻՆ ԵՒ ՍԱՐԳԻՍ
ՔԱՀԱՆԱՅԻՆ ԵՒ/ ՔՈՒՐՈՋԸ ՄԵԼԻՔԻՆ:
ԹՎԻՍ ԳԶԴ (1425), ԱԻԳՈՒՍՏՈՍԻՂԻՅԵ (15):

Սա խոսում է այն մասին, որ գործ ունենք *Մելիք* անձնանվան հնչյունափոխված տարբերակի հետ, որն առաջացել է արաբերեն ոչ թե melik «թագավոր», այլ melek «հրեշտակ» բառից [1, հ.3, 296],

բ) պարզածանցավոր, որոնք բաղադրված են հետևյալ վերջածանցներով՝ *-իկ՝ Եալիկ* (1540 թ.), *-ճի* (*-չի*) *Տենուրչի* (1401 թ.), *-ուհի՝ Երանուհի* (1472 թ.), *-ում՝ Խաչում* (1489 թ.), *-քա*, որը սլավոնական լեզուներին բնորոշ *-ка* ձևայթի հնչյունափոխված տարբերակն է [6,]՝ *Աթարա* (1528 թ.)¹³:

Բացառիկ է *-քա* և *-ուշ* ածանցների միաժամանակ կիրառությունը անձնանվան կազմում *Արմուշքա*, որը սլավոնական մշակույթի ազդեցություն է [6, 149-162],

գ) երկբաղադրիչ բարդ կազմություններ, որոնք լինում են՝

▪ համադրություններ՝ ձևավորված «*խաթուն, մելիք, խոճա, պէկ/պակ/պէ/պէ՛, պիքր/պիքթ, շահ/շալ/շա/շ, ամիր*» անձնանուն» կաղապարով: Դրանցից են՝


1. արական *Ուլպէկ, Սարուպէ, Խուլթուպէ, Թագորշա, Խուլթուշա, Սուլթանշահ, Հունդիշ, Խըրըշահ, Սաֆարշա, Հոռուշ, Շիրինշ, Ամիրխեր* անձնանունները:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում *Հունդիշ* անձնանունը, որն արձանագրության մեջ վերձանված է *Հունդ իշխան*, որում *խան* հնչյունակապակցությունը,

¹³ ՀԱԲ-ում *Աթա* բառահոդվածի տակ չենք գտնում *Աթարա* ածանցավոր կազմությունը

¹⁴ Հիմքում *բեգ* արմատն է:

համապատասխան փակագծերի մեջ առնելով, ավելացրել են վիճակագրագետները՝ ծանոթագրության մեջ նշելով, որ այն կարելի է վերծանել նաև *Հունդիշահ*: Ահա համապատասխան արձանագրությունը.



Հունդիշ անվան *Հունդիշահ* տարբերակով վերծանելու օգտին է նաև այն, որ նշյալ տարածաշրջանի արձանագրություններում *իշխան* բառը գործածված չէ. դրան փոխարինել են ոչ հայկական ծագման տիտղոսանուններ: Համեմատելով *Շիրինշ* անձնանվան հետ կարող ենք նշել, որ *Հունդիշ* անձնանունն էլ է նույն մասնակադապարով կազմվել:

2. Իզական Ուլուպիբա, Խաթունպակ, Փաշախաթուն, Շամշախաթուն, Նուրմեյիբ, Անայխաթուն անձնանունները, որտեղ գերակշռող են *խաթուն* բաղադրիչով կազմությունները:

Հիշատակվել են նաև «հատկանուն + անուն» «անուն + անուն» «անուն + բայարմատ» մասնակադապարներով համադրություններ, որոնք սակավաթիվ են, ինչպես՝ **արական Ածատուր, Ասվատուր**¹⁵, *Խաչերես, Վարդերես, Խաչկարապետ, Տերտեր, և իզական Գինեսարդ* անձնանունները:

- Հարադրություններ, որոնք ձևավորվել են վերոնշյալ բաղադրիչների մի մասի հարադրումով, «*խաթուն, մեյիբ, խոճա, պեկ/պակ/պեյ/պե, պիթա/պիթե, շահ/շա + անձնանուն*» կադապարով, որտեղ առկա է շարադասական հակառակ տարբերակը: Դրանցից են՝ **արական Խոճա Մատուրեօլ Պէ, Սովինջ Պէկ, Էտիլ Պէկ, Էմին Պէ, Թուման Պէկ, Սէհրիշա, և իզական Եսիլ Սեյիբ, Աղուբ**¹⁶*Խաթուն, Եաղուբ Խաթուն, Մուղամ Խաթուն, Մուղալ Խաթուն, Գուլաֆչա Խաթուն, Տովլաթ Խաթուն, Մայրա Խաթուն, Արմուշ Խաթուն, Ջերիֆ Խաթուն, Սիրմա Խաթուն, Աւաթ Խաթուն* անձնանունները:

Վերոնշյալ բարդություններում հետաքրքրական են հատկապես այն անձնանունների տիտղոսանուններով կազմությունները, որոնք համապատասխան արական և իզական անձնանունների հետ կիրառության դեպքում մատնանշել են տվյալ անձի հասարակական դիրքը, ինչպես՝ «իզական +արական» – *Խաթունպակ*, «արական + իզական» – *Փաշախաթուն*:

Վերոնշյալ անձնանունների մեծ մասը վկայված է Անիի վիճակական արձանագրություններում, սակայն նրանցում գերազանցապես հանդիպում են *տիկին, պարոն* տիտղոսանունները, ինչպես՝ *Աւազ պարոն, Հոռոմ տիկին, Գոհար տիկին*, բայց նաև *Գոհար խաթուն* և այլն:

Ասվածից դժվար չէ եզրակացնել, որ հիշյալ գաղթավայրերում հայրենակիցները սկսել են կրել օտար ազդեցություններ՝ բնիկ և եվրոպական փոխառություն համարվող *պարոն* տիտղոսանունների փոխարեն գործածելով մասնավորապես թուրք-թաթարական տիտղոսանուններ:

դ) Եռաբաղադրիչ բարդ կազմությամբ վկայված է *Ճերմակ Խաչիկ Պասպա* անձնանունը, որտեղ առաջին բաղադրիչը տիտղոսանուն է:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.1-52>

¹⁵ *Աստվածատուր* անվան կրճատված տարբերակն է (ՀԱԲ, հ. 1, 250):

¹⁶ *Աղուբ* անձնանունը *Եաղուբ* անձնանվան հին տարբերակն է (ՀԱԲ, հ. 1, 110):

Գրականություն

1. Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. 1, 3, Երևան, 1942:
2. Ավագյան Ս., Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, Երևան, 1973:
3. Ավետիսյան Տ., Հայկական ազգանուն, Երևան, 1987:
4. Ավետիսյան Տ., Հայոց ազգանունների բառարան, հ. 1, Երևան, 2010:
5. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988:
6. Խաչատրյան Գուրգեն, Անձնանունները Կամենիցի հայկական դատարանի արձանագրություններում (XVI դ.), Պատմաբանասիրական հանդես, թիվ 1, 2020.
7. Հարությունյան Խ., Անձնանունները հայերեն ձեռագրերի հիշատակարաններում. նորահայտ անձնանուններ ժա.-ժգ. դարերի հիշատակարաններից, <https://www.matenadaran.am/ftp/data/Banber25/9.Kh.Harutyunyan.pdf>:
8. Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Երևան, 1982:
9. Никонов В. Состояние и задачи ономастических исследований Кавказа // «Вопросы языкознания» М., 1975, № 4.

Աղբյուր

Դիվան հայ վիմագրության 7, Ուկրաինա, Մոլդովա /Կազմ.՝ Գ. Ս. Գրիգորյան: ՀՀ ԳԱԱ Հնագիտ. և ազգագր. ին-տ. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996:

Личные имена в армянских лапидарных надписях 14–16 вв. (современная территория Украины)

Գայե Չոպուրյան

Резюме

Ключевые слова: автономия, мужские личные имена, женские личные имена, титульные имена, сопоставление, противопоставление

В армянских лапидарных надписях 14–16 вв. присутствуют личные имена, которые в ряде случаев являются новыми в армянской антропонимической системе. После их изучения словарь личных имен Г. Ачаряна может быть дополнен не только более ранними хронологическими датировками (Хачум, Хетршай, Малхас, Нор Парон, Сатат, Сарупе, Азиз Хатун, Чихан, Пей Мелик, Сирахатун, Тилшат), но и новыми фонетическими версиями личных имен (Ракель, Улпек, Тагорша) и новыми именами (Атака, Армушка, Бадиар, Еавлик, Тулайд, Хачкарапет, Хундиш, Мерхидер, Михно, Мутах). Наличие личных имен также свидетельствует о том, что в среднеармянский период развития литературного армянского языка процесс личной идентификации продолжался в жизни армян-колонистов, о чем свидетельствуют лапидарные надписи. Мы обращаемся только к надписям на территории современной Украины. Можно отметить, что местные армяне мигрировали преимущественно из Ани, сохраняя свою антропонимическую систему наименования в порядке наследования. Часть из них (Саргис, Мелик, Петрос, Газар, Григор) уходит своими концами в древнюю эпоху развития литературного армянского языка и используется до сих пор, остальные имена (Асли, Баба, Бадиар) составляют определенный пласт в среднеармянском литературном языке, который обусловлен влиянием иноязычной среды.

Personal Names of 14-16th Century Armenian Lapidary Inscriptions (Region of Present-Day Ukraine)

Gayane Chopuryan

Summary

Key words: *personal name, male personal name, female personal name, title name, combination, composition*

The personal names in the lithographic inscriptions of the 14th-16th centuries there are some personal names, which in some cases are a novelty in our Armenian personal nomenclature system. Studying those, Acharyan's dictionary of personal names can be supplemented with not only numerical personal names (Khachum, Khatrshay, Malkhas, Nor Paron, Satat, Sarupeh, Aziz Khatun, Chihan, Pey Meliq, Sirakhatun, Tilshat), but also new phonetic versions of personal names (Raquel, Ulpek, Tagorshah), and new personal names (Ataka, Armushqah, Badiar, Yeaulik, Tulayd, Khachkarapet, Hundish, Merhider, Mikhno, Mutakh). The existence of new personal names also testifies to the literary Armenian that in the middle period of the development of the Armenian, the process of personal identification continued in the life of the Armenians of the colony, which is mentioned by the lithographic inscriptions.

Referring only to the records of the region of present-day Ukraine, it's noticeable that the local Armenians migrated mainly from Ani in the order of inheritance preserving their personal nomenclature system. Some of them (Sargis, Meliq, Petros, Ghazar, Grigor) were handed down from the ancient period of development of literary Armenian and are still used nowadays, others (Asli, Babah, Badiar), present a new layer in the middle literary Armenian due to the influence of the foreign environment.

Ներկայացվել է 15.10.2023 թ.
Գրախոսվել է 30.10.2023 թ.
Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.